ՇԱԲԱԹ 22 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901 Թիւ 353

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԸ
Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 % զեղչ կ'ըլլայ։

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна
Rédaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Գրութիւնք ետ չեն տրուիր

Արտասահմանի ձեռքէ)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

R. P. Kaléimcarian, Mechitharistengasse W. 4 Vienne (Autriche)

ԱԶԴ

Մեր չի վճարող բաժանորդներէն կը խնդրենք շտապեն բաժնեգիններնին ղրկել, որպէս զի մենք ստիպուած չըլլանք ամէնքին ալ մէկիկ մէկիկ խայտառակել հրապարակաւ։

ՀԱՅԱՍՏԱՆ

(ԹԱՆԻ ՍԵՊՏ. 29Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾԸ)

Բ. Դուռը ինքը խոստովանում է հայկական վիլայէթների ծանր կացութիւնը՝ պետութիւններին ազդարարելով հարցաքննիչ յանձնախմբի կազմվելը։

Շատ միամիտ պէտք է լինել այդ քայլին ոեւէ կարեւորութիւն տալու համար։

Արդէն յայտնի են այդ քննութիւնների արժէքը, որոնք սկսվում եւ կատարվում են ոչ թէ ճշմարտութիւնը գտնելու համար, այլ հասարակաց կարծիքը մոլորեցնելու, խնդիրը քնեցնելու եւ պատրանքով գոհացում տալու համար։

Այդ տեսակ յանձնախմբերի պատմութիւնը, որոնք գործում էին 1895 թւին, մեր աչքի առջեւ են, եւ մեզ փաստում են թէ՝ դրանք աւելի չարիքը սաստկացնելու համար են, քան թէ բառնալու. թէեւ այդ նպատակով են ստեղծվում։

Մամուլքները, աւելի ճիշդը՝ կասկածները հաստատում է եւ այն, որ Սուլթանը միանգամայն թէ իր բարի տրամադրութեան կարծեցեալ այդ գրաւականն է տալիս Եւրոպային եւ թէ միջոցներ է ձեռք առնում խռովութիւնները պատահած հայկական վայրերից անկախ վկաներին հեռացնել։

Մուշ գաւառի իշխանութիւնները անհաւատալի չափով իրենց վատ տրամադրութեան փաստը աւրին Վանի ռուսական հիւպատոս Ումանսկու վերաբերմամբ, որը ուղարկված էր, բուն տեղում, ժողովրդի դրութեան մասին տեղեկութիւններ հաւաքելու։ Հակառակ դրանց՝ Ցարի պատգամաւորը, որին ուղեկցում էր մի զօրաւոր խումբ եւ առանց որի նա չը պէտք է կարողանար առաջ գնալ, կարողացաւ տեսնել, շօշափել՝ ճիշդ գաղափար կազմել եւ իր կրած տպաւորութիւնների արդիւնքը հետեւեալ լակոնական հեռագրով հաղորդել ռուս դեսպանին.

„Կացութիւնը վատ է"։

Նոյն նպատակով Բիթլիսի վալին յաւակնել է Ամերիկացի մի միսիոնարի արգիլել Նահանգում շրջելու։ Ու այդ անհաճելի ականատեսին ճամբան շարունակելու համար, պէտք եղաւ Միացեալ Նահանգների դեսպանի պատճառաբանեալ ազդարարութիւնը։

Ուրեմն պարզ է թէ Եըլտըզում մեծ ճիգեր են թափում լուսաւոր աշխարհին արգիլել իր նայուածքով Հայաստանի մութ անկիւնները թափանցելու։

Այդ դիրքը արդէն շատ բան է պարզում։

Այդպէսով է խղճահարութիւնից տանջված խնդիրը լոյս ստեղծում։

Այդպէսով մի միապետ, որը գիտէ թէ ինչ է կատարվում եւ ինչ է պատրաստվում իր կայսրութեան մէջ, չէ սպասում որ նախատեսվի եւ մարդկային իրաւունքների դէմ եղած դաւադրութիւնների առաջն առնվի, այլ ճիգեր է թափում հեռացնել բոլոր անդադրնապան գիտողներին։ Միշտ դժուար է Հայաստանի մէջ ճամբորդել. բացի վատ հաղորդակցութեան պատճառած դժուարութիւններից Թուրքիան նախանձոտ խնամքով հսկում է եւ այդ նահանգների սահմանները։

Մի լորդ Պէրսի, որի դիրքը, ծագումը, բրիտանական կառավարութիւնից ստացած յանձնարարականները, վերջապէս անձնական թրքասիրական եւ քրդասիրական զգացմունքները իր առջեւից վերցնում են ամէն մի պատնէշ, կարող է իր հաճոյախօսութիւններով վարձատրել իր վայելած հիւրասիրութեան համար։

Մի Լինչ կարողացաւ իբրեւ հնագէտ, քաղաքագէտ, մարդաբան ճամբորդել երկրի ամէն ուղղութեամբ եւ մի կարեւոր գործ դուրս բերել, բա՛յց քանի հետաքրքիրներ գանից դուրս նետվեցի՞ն, եւ քանի ճամբորդներ իրենց անցագրերը չը ստացա՞ն։

Եւրոպան երբեմն իր անտարբերութեան, անգործութեան եւ quasi մեղսակցութեան համար մեղմացնող պարագաներ փնտռեց իր անգիտակցութեան մէջ։ Հիմա, ժամանակին ազդարարվելով, չը պէտք է կարողանայ այդպիսիներում հայցել։

Այն ինչ նրան ազդարարում է որ Հայաստանում նոր ծանր պատահարների սկիզբն է դրվում։ Նախ քան Օսմանեան չորրորդ զօրաբաժնից ութ վաշտ Մուշ զօրք ղրկելը, որով աւելի մի աւելի վտանգաւոր տարր է աւելանում, յայտարարվում էր վտանգաւոր դրութիւնը։

Հեռագրական գործակալութիւնները, սկսած այն ընդհարումից որ տեղի ունեցաւ անհամեմատ պակաս կարեւորութիւն ունեցող շահերի պատճառով քան Հայաստանինը, խզեց Թուրք-ֆրանսական յարաբերութիւնները, տեսնում են չարիքի նշանները եւ հեռագիրներ են ուղարկում այն տեղերից, ուր մի որոշ չափով պայթում է մի ամբողջ ժողովրդի ողբերգական տագնապը։

Սակայն այդ տեղեկութիւնները շատ անկատար են, շատ անգոհացուցիչ, կասկածելի։

Ուրիշ աղբիւրներից եկած տեղեկութիւնները մեզ համար աւելի պարզ էին։

Սուրբ դատի ախոյեանները «Պրօ Արմէնիայի» մէջ, որը այնքան աչքի է զարկում իր առատ թղթակցութիւններով, նկարագեղ եւ ստոյգ նամակաքաղվածքներով, ԴՐՕՇԱԿի մէջ արթուն օրգանի այն կուսակցութեան, որը գիտէ թէ ի՞նչ է ուզում, գիտէ ուզել եւ գործել, մեզ օրը օրին հասցրին ճիշդ ու դրական մանրամասնութիւններ Սասունի, Զէյթունի խռովութիւնների եւ դրգռված նահանգների մասին։

Հիմա, Մուշի եւ իր նահանգի պատերազմական վիճակի մէջ յայտարարվելու պատճառով՝ ոչ մի նամակ չէ կարողանում անցնել։

Յունիս ամսից սկսած դրէթէ նամակային հաղորդակցութիւնը դադրել է. յուլիսից սկսած տեղեկութիւնները կցկտուր են. եթէ իրերի կացութիւնը թոյլ է տալիս կասկածել ամէն ենթադրութիւն անել, ուրեմն պէտք չկայ խարխափելու մթացնող խաւարի մէջ, ուր փոթորիկներն են կազմակերպվում։

Ուրեմն պէտք չըկայ դիւանագէտների ստիպողական պարտականութեան վրայ շեշտելու որ տեղեկանան ու մութը ցրվեն, որը միայն ոճիրի համար նպաստաւոր է։

Սեպտեմբեր 3ից, երբ Եըլտըզ հասած հեռագիրը տարտամօրէն ու խորհրդաւոր կերպով խօսում էր Մուշի կոտորածների մասին եւ իբր վերջաւորութիւնը ներկայացնում Շէրիֆ քուրդ բէյի սպանութեան, բոլոր տագնապները հաստատված են։

Զէքի փաշայի, 1895ի դահիճներից մէկի, եւ չորրորդ զօրաբաժնի ներկայութիւնը չէ որ մտքերը պէտք է հանգստացնէ։

Ճշմարտութիւնը այն է որ՝ բացի քիչ թէ շատ կանխամտածված պատահարներից, որոնք ամէն բոպէ կարող են այդ դժբաղդ նահանգներում պայթեցնել նոր տանջանքների եւ մորթումի փոթորիկը, Հայաստանի կացութիւնը միշտ կը մնայ գերազանցօրէն անհանդուրժելի եւ անկայուն, քանի որ, վերջապէս, պետութիւնները չեն ըմբռնի Բեռլինի դաշնագրութիւնը գործադրելու անհրաժեշտութիւնը։ Թեթեւօրէն չէր որ այնպիսի մեծ տագնապի վերջում, միջազգային արէոպագոսը այդ ընդարձակ պայմանագրութեան մէջ որոշեց օսմանեան կայսրութիւնը փրկելու միջոցները։

Այն թուլութիւնը՝ որ խորտակեց Արեւելքի վերաբերեալ այդ դաշնակցութեան յայտնի հիմնական տրամադրութիւնները, մասնաւորապէս 61րդ. յօդուածը հայկական բարենորոգութիւններովը միասին, պատասխանատու է բոլոր դժբաղդութիւնների, որոնցից մինչեւ հիմա տանջվել են Սուլթանի հպատակները եւ որի հակահարուածին ինքը Եւրոպան ենթարկվեց։

Այդ ճշմարտութիւնը կայծակի լոյսով տեսնվեց հայկական կոտորածների անակնկալի հետեւեալ օրը, եւ մայիսի «յիշատակագիրը» եղաւ պետութիւնների սպառնացող վերադարձը դէպի միակ փրկարար քաղաքականութիւնը։

Այսօր պետութիւնները մի տեսակ պայմանաժամ ունեն. բարեյաջող ժամը իրենց առջեւն է այդ սխալի արդիւնքը փարատելու համար։

Ամբողջ Արեւելքի ժողովուրդները հակառակ այնքան յուսախաբութիւնների, չեն կորցրել իրենց դարեւոր սովորութիւնը իրենց աչքերը ուղղել Ֆրանսայի կողմը, ինչպէս մի բարձրագոյն ապաւէնի՝ եւ յոյս ունեն թէ նորերս տեղի ունեցած մտերմական ցոյցերի, որոնք երաշխաւորում են միջազգային հաւասարակշռութիւնը երկու դաշնակից եւ բարեկամ պետութիւնների անունով, արդիւնքը պէտք է լինի Սուլթանի վրա ճնշում գործ դնել, առանց որի այդ իշխանը ոչ մի միջոց ձեռք կառնի Հայաստանի մէջ տեղի ունենալիք նոր պայթումների առաջն առնելու համար։

Դիւանագիտութիւնը երբեք աչքի թող չը պէտք է անի թէ՝ կոտորածները, որոնց առջեւ մարդկային խիղճը վերջապէս պէտք է ապստամբի, կարող են ծնվել այն վիժառութիւնից որով ամենից աւելի զբաղվում է իրապաշտ դիւանագէտների խոհեմութիւնը ծայրը ծայրին հասած ժամանակ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պոլիս, 15 Սեպտ.

Բարիզէ կը հեռագրուի Սեպտ. 14 թուականով. պաշտօնական շառաւեղեալ շրջանակներուն մէջ կապակցեալ թէ մօտ ատեններս Պօղոսյ Եւրոպացի դեսպանները, իրենց կառավարութեանց հրամանով, համաձայնելով մը պիտի զուգարեն, Հայաստանի վերջին ծայր տագնապալից կացութեան վերջ պարտաւորել մը մտցնելու համար։

Կը տարաձայնուի նաեւ թէ մեծ պետութիւնները, Հայաստանի համար կրկին համաձայնական կացութիւն մը ծրագրած են, ապստամբ համար զայն թրքաց ձեռքէն։

Գամեր Արշաւիր

ՄՈՒՇ, 30 Յուլիս

(Շար. նախորդ թիւին)

Ինչպէս բսինք, Ս. Մ. հարկադրուեցաւ արօր և մաճ ձգել ու զէնքի դիմել։

Երբեմն հլուեթեամբ ամէն բան տանող այդ պարզ գիւղացին, այսօր վրիժու ծարաւով այրուած, Մշու աշխարհի առիւծը դարձած է. կայծակի արագութեամբ երկրի մէկ ծայրէն միւս ծայրը, վտանգաւոր տեղեր կը թռչի ու վերջ կուտայ այն չուներու կեանքին որոնք միշտ հայ գիւղացիններուն վտանգ սպառնացած են և կսպառնան։

Հայ երիտասարդութիւն, որ Սերոբի մահուամբ քիչ մը յուսահատած էր, Ս-Մի երեւումով կրկին ոգի առաւ. շատ տեղեր սկսած են խումբեր կազմակերպել։

Այս խումբէն յետոյ Ղ. Մ.ի 60 անձէ բաղկացեալ խումբ եւս երեւան եկան ու սկսաւ Ս.ի հետ պատ համարձակ գործել։

Մշոյ ծոցի մէջ ծնած ու սնած, անվեհեր քաջամանօթ այդ քաջ երկու խմբապետները իրենց ազդեցութիւնի ի գործ դնելու ու իրենց չորս կողմն առ ու սարսափ սփռելու համար, էն առաջ տեղական գործողութիւններու ձեռնարկեցին այնպիսիներու վրայ, որոնք մինչեւ ցարդ Մշոյ աշխարհի տէր ու թագաւորը կը ճանչցէին. Սարսափը այնքան մեծ եղաւ, այդ դաւաններուն համար, որ այլ եւ առտոնց համար կարելի չեղաւ հայ գիւղերու մէջ գիշերել։ Հայերու հետ գործ ունեցողներն իսկ հարկադրուեցան իրենց տեղերն փախչել։

Այդ երկու խմբապետներու շնորհիւ կաթոլիկ գիւղերու երիտասարդութիւնն ալ սկսաւ արթննալ և աջակցիլ հայ ազատագրութեան գործին։

(Շարունակելի)

ՈՒ՞ՐԷՔ ԿՈՐԵԼ

Թուրք զօրքերը պաշարել են Սասունը, Մուշը. եկած լուրերի համաձայն երկու գաւառների մէջ էլ հայերը դիմադրում են, և առաջվայ պէս ոչխարի նման չեն ենթարկվում թուրք ամբոխի և քրդերի անտանելի քմահաճոյքներին. Հրդեհը բոցբոքվում է մեր հայրենիքի մէջ, հայ ժողովուրդը մէն մինակ թուրք զօրամբերի, քիւրդերի և թուրք ամբոխի դէմ յանդիման է մնացել. Հայաստանը երկունքի մէջ է. կրկին երկունքի։

Եւրոպան անգամ, „արիւնածարաւ“ վատ, չարչի եւրոպան՝ իր մամուլով, դիպլոմատներով, հասարակութիւններով սկսել է Հայաստանով զբաղվել, Նրա դառն վիճակը սգալ և օգնութեան կանչել փրկելու խեղճ, արիւնքամ հայ ժողովրդին, որը գալարվում է իր հարազատ երկրի մէջ, մահմեդական գազան տէրերի ճանկերի տակ։

Այո, հայ ժողովուրդը մէն մինակ է իր թշնամու հանդէպ. Օտարները չեն գալիս, բայց իրեննեըն էլ չը կան։

Ու՞ր էք, հայ յեղափոխական, գործիչ, կազմակերպութիւններ. Ու՞ր են ձեր պատրաստութիւնները, ինքնապաշտպանութեան համար մթերած զէնքի պաշարը. ո՞ւր են ձեր յարմար առիթի համար կեդրոնացրած ուժերը։ Ու այդ բոլորը եթէ կան, էլ ո՞ր օրվայ համար էք պահում։

Ու՞ր էք և դուք, վատ, կծծի ժանգոտ հայ հարուստներ. յարմար քաղաքական վայրկեան էիք փնտռում, Եւրոպայի համակրութիւնը էիք որոնում, Սուլթանի համար տագնապալից վայրկեաններ էիք սպասում ձեր ոսկին հայրենիքի ազատութեան սեղանի առջեւ թափելու համար։ Այսօր այդ բոլորը կան, իսկ դուք ո՞ւր էք կորել. ո՞ւր են ձեր ոսկինները։

Դուք բոլորդ էլ մէջտեղ չը կաք, կորել էք, և հայ ժողովուրդը մէն մինակ մնացել է գազան թշնամու թաթերի տակ։

*
* *

Այո, հայ ժողովուրդը մէն մինակ է թշնամու հանդէպ. իսկ հայ յեղափոխականը Թուրքիայից դուրս ծրագիրներ է պատրաստում ապագայում հայ գիւղերին ազատութիւն տալու համար. Նա պէտ վայրերում թերթեր է մրտում, գիտնագիտութեամբ է զբաղվում. վինավարժներ է պատրաստում Հայաստանի առեւտրականների ապագայ ազատութեան համար. Նա ճառեր է արտասանում, երեկոյթներ է սարքում մի քանի ֆրանկներ հաւաքելու. ոչ յեղափոխութեան, ոչ զէնքի, այլ գրչի, մրի և ապարդիւն ճանապարհորդութիւնների համար։ Եւ հայ յեղափոխականի խիղճը հանգիստ է. Նա այդպէսով հայ ժողովրդի ազատագրութեան գործին ծառայած լինել է կարծում... Հայ յեղափոխականը դեռ պատրաստվում է, իսկ այնտեղ հայ ժողովուրդը մէն մինակ, առանց այդ յեղափոխականների ներկայութեան և մասնակցութեան՝ կռւում է գազան թշնամու հետ...

ՎԱՐԴՕ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ № 5

(Արտատպուած "Րէֆօրմի"ից)

«Այսօր 1901 թ.ի սեպտ. 12ին, Մակեդ. Օդր. բարձ. Կոմիտէն իր ամբողջ կազմովը, ըստ որոշման 9րդ. հերթական համաժողովի, ուսումնասիրեց Վառնայի Մակ. Օդրինեան մասնաճիւղի թիւ 13րդ. արձանագրութիւնը, որից պարզ կերպով երեւաց թէ «Սթրանճա» ընկերութեան նախկին նախագահ Պետր Դրագուլէֆ վատնել է կազմակերպութեան դրամները, և հետեւեալ որոշումը տուեց.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻՆ

III

Վահէի զինուորների ձեռքից փախչելու օրից գրեթէ տասը տարի էր անցել։

Նրա մասին միայն այսքանը գիտէի, որ երկու տարուց յետոյ կրկին ձերբակալվել էր և աքսորվել Սիբիր, տաժանակիր աշխատանքի։ Երբեմն միտքս ընկած միջոցին շատ ափսոսում էի որ այդ կենդանի, ժիր անկախ բնաւորութիւնով տղան չղթայակապ ամեն մի հասարակ զինուորի հրամանին ու խարազանին հանդուրժելով գետնափոր հանքերի մէջ աշխատելու էր դատապարտված։ Շատ անգամ մտածում էի որ Վահէն կամ անձնասպան կը լինի, կամ թէ այնտեղից կը փախչի. յամենայն դէպս ինձ համար շատ հետաքրքիր էր նրա վերջը իմանալ։

Մի քանի տարի առաջ գտնվում էի Տփխիսում մի բարեկամիս մօտ։

Բարեկամս և ես գիշերը, երբ ամբողջ ընտանիքը արդէն քնել էր, տեղաւորվեցինք իր առանձնասենեակում ու զրուցում էինք։ Յանկարծ դրսի դուռը ծեծեցին. այդ տարաժամին դռան ծեծվելը մեր երկուսի վրա էլ վատ ազդեց. որովհետեւ մտածեցինք թէ կամ բարեկամիս տունը խուզարկելու են եկել, կամ թէ ո և է մէկը վտանգվել է ու գալիս է մեզ մօտ թագնվելու։

Վերջապէս բարեկամս յուշիկ քայլերով, ճրագը ձեռքին գնաց դուռը բանալու, ես էլ հետեւեցի։ Դուռը բացուելուս պէս խիկոյն չտապով ներս մտաւ բարձրահասակ, նիհար, բայց շատ վառվռուն սեւ աչքերով մի մարդ, դուռը ետեւիցը ծածկեց և սուեց.

— Ներեցէք որ ձեզ անհանգստացրի գիշերվայ այս ժամին. ես Բարսաղանից Եղօն եմ, Ձէք ճանաչո՞ւմ ինձ։

Բարեկամս բոլորովին գունատվեց և քրթմնջելով պատասխանեց.

Եղօ, բայց դու Սիբիր էիր աքսորված, հիմա ո՞րտեղից և ինչպէ՞ս եկար։

— Այո՛, Սիբիր էի, եւ այնտեղից եմ գալիս, երեք հոգւով փախանք. երեքս էլ Կոջորի անտառներում ենք թագնված մեզ հետ է եւ նշանաւոր Վահէն, Ա...ցին։ Ուտելու բան չունինք, եկել եմ քեզնից փող խնդրելու, մի քանի ռուբլի տուր. ընկերքը անօթի, անհամբեր սպասում են։

— Բայց դու տունս ինչպէս գտար, ո՞վ քեզ ցոյց տուեց.

— Հարցրի. հարցնելով մենք Սիբիրից մինչեւ Կովկաս հասանք. ձեր տունը միթէ դժուար է՞ր գտնել Շուտ արա, ժամանակ չկայ, եթէ ճանաչեցիր և փող պէտք է տաս մի սպասեցնել տուր։

Բարեկամս անծանօթին քննելուց յետոյ վրա բերեց.

— Շատ լաւ, եթէ դու Բարսաղանից Եղօն ես, երեխայ ժամանակդ ի՞նչ մնաս հասցրիր մեր Վարդանին։

— Այ գիտի պ, սախտակ թիթեղից շինված սարճանակով խաղ էինք անում. յանկարծ սարճանակը պայթեցրի և փառտը ամբողջ գիւպաւ Վարդանի երեսին ու այրեց։ Որչափ վախեցինք. երեքս էլ փախանք, յիշու՞մ ես։ Ինչ վատ օր էր այդ օրը. մայրս գուշակեց թէ ես մարդասպան և սիբիրական պէտք է դառնամ։ Մարդ էլ սպաննեցի, Աստուած էլ գիտի չարութեան համար չէր։

Էհ, հին դարդերի մասին խօսելու ժամանակը չէ. նորերը աւելի շատ են։

— Ճիշդ է, ասեց բարեկամս և գըրպանից հինգ ռուբլի հանելով յանձնեց Եղօին։

Եղօն պատրաստվում էր հեռանալ, երբ ես նրան ասեցի.

— Խնդրեմ, եթէ Վահէի հետ քաղաք գաք, անպատճառ հետդ այստեղ բեր. ես ուզում եմ անպատճառ նրան տեսնել։ Հին մանկական ծանօթներ ենք։

— Կաշխատեմ, բայց չեմ հաւատում որ գայ. Նա իր հին ծանօթներից միշտ փախչում է ամաչում է գիտէ՞ք. ես զարմանում եմ այդ տղի վրա էլ կապ չի մնաց որ չը կտրէր, բայց նորահարսի նման ամաչկոտ է։ Շատ լաւ տղա է. եթէ մեզ հետ չը լինէր մենք Սիբիրում շան պէս կը սատկէինք. Նա էր մեզ սիրտ աւողը։ Շատ էլ կտրիճ տղա է. փախած միջոցներիս, ճանապարհին մեզ այնպիսի վտանգներից ազատեց, որ մենք մնացինք զարմացած։ Շատ լաւ ընկեր է։ Ափսոս այդ տեսակ տղին որ այդ օրին հասաւ։ Նրա տեղը Սիբիրը չէր. Նրա բաժինը շղթաները չէին. բայց ինչ անես, բախտի բանէ. Նրան անիծող չի եղել, բայց կրկին անբախտ է դուրս եկել։

Հա, խօսքս շատ երկարեց մնաք բարով, կաշխատեմ անպատճառ Վահէին այստեղ բերել, քանի որ այդքան ուզում էք։

Այս ասելով մեր գիշերային այցելուն դուրս եկաւ դռնից և աներեւութացաւ գիշերային գաղտնապահ խաւարի մէջ։

(Շարունակելի)

1. Խնդրի առարկայ եղող «Պետք Դրագուլէվին» բացարձակապէս արգիլել ո՞ւ եւ է մասնակցութիւն ունենալու Մակեդ. Օգրինեան կազմակերպութեան։

2. «Պետք Դրագուլէվ»ին ամենախիստ կերպով յանդիմանել իր յանցաւոր գործունէութեան համար։

3. Մակ. Օգր. բարձր. կոմիտէն իւր իրաւունքն է համարում «Պէտք Դրագուլէվի կատարած զեղծումների հասած վնասների փոխարէնը փնտռել։

4. Ոչոչից որ այս վճիռը հրատարակուի «Ռէֆորմի» թերթի մէջ»։

Մեր ընթերցողները անշուշտ չեն մոռացել «Իրաւունք»ի ջերմ բարեկամ, նրա հայասէր և իդէալական տիպ հռչակած Պետք Դրագուլէվին, որը, երեք տարի առաջ, «Իրաւունք»ի խմբագրի հետ միանալով, Պուլկարելէն, Հայերէն և Թուրքերէն յեղափոխական ուղղութեամբ մի քանի համար թերթ հանեցին եւ ուզեցին երկու հասարակութիւններէն էլ այնպէս ցոյց տալ թէ՝ Հայ եւ Բուլգար յեղափոխականները միացել են, ու այդ թերթն էլ նրանց օրգանն է։ Իհարկէ ընթերցողները յիշում են նոյնպէս այն՝ որ այդ Դրագուլէվը «Շարժում»ի խմբագրապետի դէմ դատ էր ուզում բանալ, ինչ որ հնարվի զրպարտութեան պատճառով. իսկ Իրաւունքի խմբագիրն էլ մեծագոռոզ կերպով յայտարարում էր այդ սարսափեցնող լուրը հայ հասարակութեան։

Ահա, այդ արձանագրութեան մէջ, իր ամբողջ էութեամբ փայլողը նոյն Դրագուլէվն է, Իրաւունքի իդէալական Պետք Դրագուլէվը։

Իրաւունքի խմբագիր. եւ Պէտք Դրագուլէվ, որչա՜փ մտերիմ, որչա՜փ սերտ բարեկամներ են. գիտէ՞ք ընթերցողներ։

ԹՈՒՐՔԻԱ

ՄԱԿԵԴՈՆԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Կ. Պոլսէ կը հեռագրուի Վիէննայի լրագրաց.

Վանայ ռուսական դեր. հիւպատոսը Սասունէ կը հեռագրէ թէ քիւրտերը քանի մը անգամներ ամեհի կերպով յարձակեցան հայերու վրայ։

Հայերը առիւծի պէս պաշտպանեցին ինքզինքին և սակայն շատ մարդ կորուսին թշնամոյն բազմութեան առջեւ։

* * *

«Վիէննէր Թակէպլատ» թերթը Սոֆիայէ կիմանայ թէ պուլկար ապստամբական խումբեր Մակեդոնիա կարշաւեն, պուլկար իշխանութեանց աչաց առջեւ։

Վիտինի և Ռուսճուքի պուլկար գործարանները մեծ քանակութեամբ ռազմամթերք և փամփուշտ կը ծախեն մասնաւորներու, որոնք մաքսանենգութեամբ այդ ապրանքները Մակեդոնիա կը մտցնեն։

Ասոնցմէ կերեւի թէ, կըսէ նոյն թերթը, պուլկար կոմիտէն վերստին սկսած է գործել ի Մակեդոնիա։

«Բոլիթիք Քորէսպոնտան» Աթէնքէ կիմանայ թէ հոն Թրքաստէր հոտանքը սկսած է անհետանալ։

Ցոյները շատ զայրացած են Թուրք կառավարութեան դէմ որ յոյն կառավարութենէն անամոթաբար Իսմայիլ Հաղգը անուն ալպանիացի յեղափոխականին արտաքսումը պահանջած է։

* * *

Պոլսէ կը հեռագրուի թէ թըղթատարական ծրարներու և արժէքաւոր թուղթերու գողութիւնը կը շարունակուի։

Սելանիքի գծին վրայ ութ հազար ֆրանք գողցուած է Համպուրկ ղրկուած նամակի մը մէջէն։

* * *

«Լոքալանցայկր» լրագիրը Պոլսէ կիմանայ թէ Սասունի հայոց արդի վիճակը նոյն է, ինչ որ 1895ին.

«Թրքական զօրախումբեր Սասունը պաշարած են»։

Նոյն իսկ Մուշի մէջ մէկը չի գիտեր թէ Սասունի մէջ ի՞նչ կանցնի կը դառնայ։

Կը կարծուի թէ ողբերգական տրամներ և արիւնալեղութիւններ եղած են, քանի որ Սասունի մէջ շատ քիւրտ կայ։

* * *

«Հայաստանի մէջ զինուորական բոլոր գործողութիւնները Սուլթանին ուղղակի հրամանովը կը կատարուին»։

* * *

Բոլիթիշէ Քորէսպոնտէնս լրագրին Պոլսէն քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սուլթանը վերջին ծայր մտահոգութեան մէջ է։

Իր վախն այն է թէ մի գուցէ Ֆրանսա Ռուսիոյ Զարին հետ համաձայնութեան մը յանգի Թուրքիոյ դէմ։

Դալով Տանձիկի տեսակցութեան, Վիլհէլմ կայսրը ապահովիչ լուրեր տուած է Սուլթանին։

* * *

Վիէննայէ հեռագիր մը կը հաղորդէ թէ՝ Հայաստանէն հասած լուրերը կիմացնեն թէ Սասունէ Մուշ տանող ճամբան ամբողջապէս գրաւուած է Թուրք զինուորներէ։

Վանէ կը հեռագրուի թէ՝ Ճիւլամէրկի մէջ արիւնալեղ ընդհարում մը տեղի ունեցած է քրդերու և նեստորականներու միջև։

Բազմաթիւ զինուորներ ղրկուած են Ճիւլամէրկի կողմերը։

Պոլսէ կը հեռագրուի՝ Մեծ Եպարքոսին վրայ, նախարարական խորհրդի նիստին պահուն, մարելիք գալով, վար ինկած է։

Սուլթանը քանի մը օրուան համար արձակուրդ շնորհեց Եպարքոսին։

* * *

Սոֆիայէն «Ունիվէրսալ»ի ղրկուած հեռագիր մը կըսէ թէ այս օրերը ծանուցագրեր փոխանակուած են պուլկար և Թուրք կառավարութեանց միջև։ աւազակներէ լեռը տարածուած Էլէն Սթոնէ Ամերիկացի միսիոնարուհիին խնդրոյն համար։

Ռուսը կը պնդէ թէ աւազակախումբը միսիոնարուհին առանձնելով՝ պուլկարական հողին վրայ ապաստանած է։

Այն ատեն պուլկար կառավարութիւնը զօրք ղրկեց Ռոտոբիվիլաքի լեռները, սակայն խուզարկութիւնները պարապ ելան և հաստատուեցաւ թէ՝ աւազակները պուլկարական հողը չեն անցած։

ԹՐԱՆՍՎԱԼ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Երկու տարին կանցնի որ պօէրները, ափ մը ժողովուրդ, աննկարագրելի և անհաւատալի քաջութեամբ կը կռուին Անգլիոյ հետ, կը պաշտպանեն իրենց անկախութիւնը։

Այդ բացառիկ ժողովուրդը, Բրիտանական ամէն գաղանութիւններնուն տակով, շարունակ և յանկարծակի, երբ արդէն ընկճուած կը կարծուի, այնպիսի ուժգին թափով մը ցոյց կուտայ իր զօրութիւնը իրմէ անթիւ անգամ զօրեղ թշնամիի մը դէմ, որ մարդ կը շուարի։

Անգլիական գոռոզութիւնը, անգլիական եսը, երբէք և ոչ մէկ ժողովուրդ աս աստիճանի արհամարած, վիրաւորած ու ոտքի տակ տուած էր։ Օր օրի վրայ Անգլիա կը կատպի, օր օրի վրայ խիստ պատերազմական միջոցներ ձեռք կառնէ հարաւային Աֆրիկէի այդ վիրաւորուած ու ամեհի առիւծները ջախջախելու զսպելու համար, սակայն առիւծները չեն զսպուիր, իրենց գլուխը չեն խոնարհեր. խստութեան դէմ խստութիւնով, յաղթութեան դէմ յաղթութիւնով կը պատասխանեն պօէրները կը կոտրեցնեն Անգլիան, կը զարմացնեն աշխարհը, կը յանգեցնեն իրենց վրէժը, կը կատարեն իրենց հայրենասէրի պարտականութիւնը։

Ու Անգլիա այսօր ամբողջովին զբաղած է Ափրիկեան պատերազմով. կարծես թէ միջազգային ուրիշ խնդիրներ առ այժմ անոր համար գոյութիւն չունին։

Այսօր Հայկական հարցը նորէն դիւանագիտութեան և եւրոպական մամուլի նիւթ դարձած է. սակայն ոչ անգլիական հասարակութիւնը, ոչ մամուլը, և ոչ ալ դիւանագէտները կը զբաղին ատ խնդրով։

Բայց արդե՞օք Անգլիա միայն կը լռէ հայկական խնդրի մասին, թէ տակէն, լռելյայն կը հետաքրքրուի և խոշնդոտներ կը յարուցանէ։

Մեզի հաւանական կը թուի վերջինը։ Անգլիա երբէք չի ցանկար որ արեւելեան բարդ խնդիրը, մանաւանդ հայկական հարցը, առանց իր զօրեղ միջամտութեան որոշուի, որովհետեւ չի ուզենար որ հակառակորդ պետութիւնները մինակ գործելով, միայն իրենց շահերը աչքի առջեւ ունենան։ Իսկ Անգլիա այսօր շատ զբաղած է. Թրանսվալ անոր գլուխը շատ խառնափնթոր վիճակի մը հասցուցած է. կը զգայ թէ՝ չի պիտի կրնայ իր ուզածին պէս ու չափովը միջամտել արեւելեան խնդիրը լուծելուն մէջ։ Ու Անգլիա երբ ինք անկարող է մասնակցիլ ո՞ւ է քաղաքական բարդ խնդրի մը լուծման գործին շարունակ արգելք կը հանդիսանայ էնարիքներ կը յարուցանէ։

Էն.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պոլսեցի վաճառական Խաչիկ Խորասանճեան նորոգել պիտի տայ Պէշիքթաշի ազգային վարժարանը իր ծախքով, որը 50 լիրայի չափ պիտի ըլլայ։

— Խապայեան Սահակ եպիսկոպոսը արդէն Ատանայ հասեր է, ձեռնարկեր է Սսոյ կաթողիկոսի ընտրութեանը։

— Երուսաղէմի ասորիներու և հայոց միջև տեղի ունեցած վէճը տեղական դատարանը յօգուտ հայերու վճռեր է, բայց վերջնական կարգադրութեան համար Բ. Դրան տեղեկագիր ղրկուեր է։

— Հայ հռոմէական պատրիարքարանի Հռոմի ներկայացուցիչ Դօրունեան վարդապետը 200 հազար ֆրանք բերած է Պատրիարքարանի պէտքերուն համար։

— Սսոյ մէջ գտնուած զօրքերու համար յատուկ զօրանոց կը շինուի։

— Բանասէրի խմբագրութիւնը կը յայտարարէ որ 1902ի յունուարէն սկսեալ՝ «Բանասէր» ամսաթերթի պիտի վերածուի և նոր ծրագրով պիտի հրատարակուի։

Միւս անգամին յայտարարութիւնը կը տպագրենք։

— Քիչինէվի առաջնորդը Բեսարաբիոյ եկեղեցիէն 25,000 ռուբլի խնդրած է Քիչինէվի մէջ եկեղեցի կառուցանելու համար։

— Կաթողիկոսը աչունը Թիֆլիս երթալու մտադիր է։

Զմիրի վարժարաններու ծախքերը ղեկեր են. տեղական հասարակութիւնը շատ դժգոհ է, և ցանկութիւն կը յայտնէ առաջնորդարանի ծախքերը կրճատել կրթական գործի փոխարէն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Տէյլի Էքսբրէս անգլիական թերթի Պոմպէյի թղթակիցը կը հաղորդէ որ Թուրքիոյ պարսից ծոցի քովերը ունեցած եռանդուն գործունէութիւնը սկսած է կասկած յարուցանել Հնդկաստանի անգլիական իշխանութեանց մէջ։ 3000 թուրք այժմ հաւաքուած հոն են գունտերը հրապիտի դրուին Էդիսէմ փաշայի մանի տակ։

— Պօլսոյ մէջ համոզուած են թէ՝ Ֆրանսայի պահանջատէր Լօրանտօի գործը կարգադրուելուն պէս՝ Ֆրանսա իր յարաբերութիւնները պիտի վերսկսի Թուրքիոյ հետ։

— Պէյրութէն ծովային նախարարութեան եկած հեռագիր մը կը հաղորդէ թէ՝ այնտեղ մահմեականներու և քրիստոնեաներու միջև մեծ հնդհարում մը տեղի ունեցեր է։

— Մանասթրի մէջ անկարգութիւններ տեղի ունեցեր են, Ալպանացիները հիւպատոսարանի մը վրայ յարձակեր են, բայց որը ըլլալը յայտնի չէ. հեռագրական հաղորդակցութիւնները դադրած են։

— Նախարարական խորհուրդը ընդուներ է Ֆրանսացի պահանջատէր Լօրանտօի խնդրոյն վերաբերեալ Ֆրանսական կառավարութեան կողմէ եղած առաջարկութիւնը։

ԹՐԱՆՍՎԱԼ

Հոլանտայի նախարարապետը խորհրդարանին մէջ յայտներ է թէ՝ կառավարութիւնը պօէրներուն բարոյապէս կ'օգնէ, բայց պիտի զգուշանայ տէրութեանց քով որևէ միջամտութիւն ընելէ։

— Եւրոպական թերթերու մէջ կը գրեն թէ՝ Լօրա Քիչէնէր իր հրաժարականը տուած է, որովհետեւ իր և նախարարութեան միջև անհամաձայնութիւններ կան։ Հրաժարականի գլխաւոր պատճառներէն մին այն է որ պատերազմական նախարարութիւնը Քիչէնէրի պահանջները չի կատարեր։

— Բրէթորիաի մէջ յայտարարուած է թէ՝ պատերազմիկ պօէրներուն կալուածներու վաճառումը սկսի պիտի հոկտեմբեր 15ին։ Ատկէ գոյացած դրամը պիտի յատկացուի անոնց ընտանիքներու ապրուստին։

— Անգլիական թերթ մը կը յայտարարէ որ մեծ քանակութեամբ զօրք պիտի ղրկուի Թրանսվալ։

— Պոթա զօրավարը Զուլուլանդէն հեռացեր է, բայց ուր գացած ըլլալը յայտնի չէ։

— Բրէթորիէյին կը հաղորդեն թէ բազմաթիւ պօէր գերիներ Քէյսթատի մէջ հաւաքուած են և թէ կարեւոր ճակատամարտ մը մօտալուտ է։

— Տէյլի Քրոնիք անգլիական թերթին Ալաշինկթընի թղթակիցը կը հեռագրէ որ Ռուզվէլթ նախագահն ալ Մաք Քինլիի ընթացքը պիտի ունենայ Թրանսվալի խնդրի վերաբերմամբ։

Եթէ Քրիւկէր պատգամաւորութիւնը՝ մը ղրկէ Ամերիկա, նախագահը զանոնք պիտի ընդունի իբրեւ պատուաւոր հիւրեր։

Ուստի Քրիւկէր պէտք չէ որ բան մը ակնկալէ Մ. Նահանգներէն։

ՉԻՆԱՍՏԱՆ

Եւրոպական կօրքերու Բէքինէն հեռանալէն ի վեր, կատարեալ անդորրութիւն կը տիրէ մայրաքաղաքին մէջ։

Եւրոպացիները ազատ և ապահով կը պտտին քաղաքին ամէն թաղերու և արուարձաններուն մէջ, առանց ոևէ մէկէ մը անհանգստանալու։

— Լուր կը պտտի թէ՝ կայսրը երկու տարիէն յետոյ միայն պիտի Բէքին վերադառնայ։

— Կառավարութիւնը մարդիկ ղրկած է Աւստրալիա, Ճաւա, Սինգափոր այդ տեղերը հաստատուած Չինացիներէն դրամ պահանջելու պատերազմական տուգանքին համար։

— Բէքինի Հոլանտական դեսպանը իր պաշտօնակիցներուն առաջարկեր է միաձայնութեամբ ընդդիմանալ այն Չինացի պատուիրակներուն, որոնք օտար երկիրներ պիտի երթան Չինական գաղութներէն նպաստ հաւաքելու՝ մեծ տէրութեանց ըլլալիք հատուցման համար։ Սակայն շատ հաւանական չի նկատուիր որ դեսպանները այդ խնդրոյն մէջ ներդաշնակութեամբ գործեն, թէև դեսպաններէն շատերը, որոնց երկիրները պիտի այցելէ այդ պատգամաւորութիւնը, այնքան նպաստաւոր աչքով չեն նայիր չինական այդ ծրագրին։

— Հիսինկ-Նինկի մօտ ապստամբները գրաւեր են Գերմանական միսիոնարներու կայանը Գերմանական հիւպատոսը այդ մասին աղդու դիմումներ ըրեր է չինական կառավարութեան։

— Ճաբոնական այն ընկերակցութիւնը՝ որուն նպատակն է արտաքին վաճառականութեան զարգացումը և որ Քօպէի ու Օգաքայի գլխաւոր վաճառականներէն կը բաղկանայ, տարօրինակ առաջարկութիւն մը մատուցեր է իր կառավարութեան։ Այդ ընկերակցութիւնը կուզէ որ Ճաբոն մէկ կողմ դնէ Չինէն պահանջած հատուցման մէկ երրորդ մասը և անով պանքա մը հաստատէ երկու երկիրներու առեւտրական յարաբերութիւնները զարգացնելու համար։ Այդ կարգադրութեան համեմատ Չինացիներն ալ բաժնեկից պիտի ըլլան այդ պանքային, որպէսզի աւելի մտերմութիւն հաստատուի երկու ժողովուրդներուն միջև։

— Շանկայի մէջ լուր տարածուած է թէ՝ Չինական կառավարութիւնը Ռուսիոյ հետ բանակցութեան մտեր է, Բէյ—Եանկի նաւաբաժնին պատկանող վեց յածաւորակները Ռուսիոյ ծախելու համար։

Գին որոշուած է հինգ միլիոն ռուպլի որ պիտի զեղչուի Ռուսիոյ ըլլալիք հատուցման գումարէն։

ԱՄԵՐԻԿԱ

Մաք Քինլին սպաննող Ցոլկոս իր դատավճիռը իմանալէն յետոյ շատ ընկճուեր է. զղջայեր է, և ներողութեան նամակ մը գրեր է իր հօրը, անոր անպատիւ անուն մը թողնելուն համար։

— Կը ծանուցուի թէ Մ. Նահանգներու կառավարութիւնը Մաք Քինլիի անունը պիտի տայ Ֆիլիպպեան կղզիներուն։

ԻՏԱԼԻԱ

Նաբոլի քաղաքի մէջ ժանտախտի դէպքեր պատահեր են, մեռնողներ ալ կան։

ՖՐԱՆՍԱ

Կը կարծուի թէ Լուպէ քանի մը նախարարներու հետ միասին ապրիլին Ռուսիա պիտի երթայ։

— Այրերէ բաղկացած 46 կրօնական միաբանութիւններ, և կիներէ բաղկացած 370 միաբանութիւններ արտօնութիւն խնդրեր են կառավարութենէն։

Այրերուն հաստատութեանց թիւը 720 է, իսկ կիներուն՝ 3362։

ԱՆԳԼԻԱ

Ֆրանսայէն հեռացած վանականները և մայրապետներէն շատերը Անգղիա կերթան։

— Պատերազմական նախարարութիւնը բոլորովին անհիմն կը հռչակէ Լօրա Քիչէնէրի հրաժարականին լուրը։

— Անգլիական նաւատորմիղմը Պարսկական ծոցը կը հաւաքուի։ Կը վախցուի թէ Քուվէյթի մէջ խռովութիւններ վերսկսին։ Կը կարծուի թէ թուրքերը մտադրութիւն ունին Քուվէյթը տիրապետելու։

—o—

ՑՈՒՆԱՍՏԱՆ

«Ասթի» թերթը կիմանայ թէ՝ մեծ պետութիւնները մտադիր են ծրագիր մը ակզմել Կրետէն Ցունաստանի գերիշխանութեան տակ դնելու համար, որովհետեւ ներկայ անկախ կառավարութիւնը կղզիին տնտեսական ուժերէն վեր ծախքերու պատճառ կըլլայ։

ԱԶԳ

—o—

Անցեալ չորեքշաբթի Ս. Խաչի տօներու պատճառաւ «ՇԱՐԺՈՒՄ» չի հրատարակուեցաւ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄԻ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւտում, հասցեատում, համակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահագդ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻ

ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՅ ՌՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով

Ինֆիօն տէ Զէդիւտիան Արմ.
Լ'Էսորոբ տրի տը Լ'Էֆօլ տը Շիմի 2

Սուիս Ժընէվ
Կարգոդիր Ցանձնաժողով

Отговорникъ:
Мурадъ Ераносянъ

Печ. Взаимность" — Варна